ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **պրոբացիա՝** պրոբացիայի շահառուի սոցիալական վերաինտեգրման, ինչպես նաև հասարակության անվտանգության ապահովման նպատակով պրոբացիայի շահառուի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառված այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հետևանքով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու, պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարում ու վերասոցիալականացման իրականացում հասարակությունում՝ անձի նկատմամբ հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով.

2) **էլեկտրոնային հսկողություն՝** ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ այլ միջոցներով հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի և վարքագծի նկատմամբ.

3) **պրոբացիայի ծառայություն՝** պրոբացիա իրականացնող իրավասու պետական մարմին.

4) **պրոբացիայի ծառայող՝** պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձ.

5) **պրոբացիայի շահառու՝** անձ, որի նկատմամբ կիրառվել է պրոբացիա.~~5) **պրոբացիայի շահառու՝** անձ, որի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց, կամ նշանակվել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կամ անվտանգության միջոց, կամ նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում նշանակվել է փորձաշրջան, կամ նա պատիժը կրելուց ազատվել է, կամ նրա պատժի կրումը հետաձգվել է, կամ որը մասնակցում է հաշտարարության գործընթացի (բացառությամբ տուժողի և տուժողի իրավահաջորդի), կամ որի վերաբերյալ պետք է ներկայացվի զեկույց.~~

6) **անձնական գործ՝** պրոբացիայի շահառուի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ.

7) **տվյալների շտեմարան՝** պրոբացիայի շահառուների անձնական գործերի և պրոբացիայի ծառայության գործունեության վերաբերյալ էլեկտրոնային և թղթային տեղեկությունների ամբողջություն.

8) **պրոբացիայի շահառուի հաշվառման քարտ՝** պրոբացիայի շահառուի վերաբերյալ համառոտ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ.

9) **զեկույց՝** պրոբացիայի ծառայության կողմից, սույն օրենքին համապատասխան, պրոբացիայի շահառուի մասին ներկայացվող տեղեկություններ պարունակող փաստաթուղթ.

10) **հաշտարարություն՝** բանակցություններ, որոնց նպատակն է հաշտեցնել պրոբացիայի շահառուին և տուժողին.

11) **հետպատժյա փուլ՝** պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով դրա հանումը պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթների իրականացման ժամանակահատվածը.

12) **վերահսկողության պլան՝** փաստաթուղթ, որով սահմանված են պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում անձի հետ տարվող վերասոցիալականացման միջոցառումները և ծրագրերը (այսուհետ՝ վերասոցիալականացման միջոցառումներ).

13) **վերասոցիալականացում՝** պրոբացիայի շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների, միջոցառումների և ծրագրերի, իրավական և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, հասարակությունում վերաինտեգրելու և օրինապահ վարքագիծ ձևավորելու գործընթացների ամբողջություն.

14) **ռիսկերի և** կարիքների ~~**պահանջմունքների**~~ **գնահատում՝** պրոբացիայի շահառուի կողմից կատարված կամ ենթադրյալ կատարված արարքի պատճառների վերհանում և այնպիսի միջոցների պլանավորում, որոնք հնարավորություն կտան նվազեցնել կատարված կամ ենթադրյալ կատարված հանցագործության կրկնության հավանականությունը.

15) **կամավոր՝** պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման նպատակով կամավոր հիմունքներով պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացմանն օժանդակող անձ:

(3-րդ հոդվածը փոփ. 23.05.18 ՀՕ-335-Ն)

Հոդված 4. Պրոբացիայի նպատակներն ու խնդիրները

1. Պրոբացիայի նպատակներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.

2) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.

3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

4) պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը.

5) քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

2. Պրոբացիայի խնդիրներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում սույն օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.

3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորման իրականացումը՝ գնահատելով ռիսկերը և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.

4) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու~~, դատվածությունը հանելու~~ վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին զեկույցների տրամադրումը.

5) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.

6) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

(4-րդ հոդվածը փոփ. 23.05.18 ՀՕ-335-Ն)

Հոդված 12. Այլընտրանքային խափանման միջոցի կատարման ապահովումը

1. Այլընտրանքային խափանման միջոցի կատարումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին), իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ դատարանի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի (սույն գլխում այսուհետ՝ իրավասու մարմին) որոշման մեջ նշված վայրի տարածքային մարմինը:

2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

3. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ~~մեկ~~ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

4. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում վարույթն իրականացնող մարմին:

5. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան երեք ~~մեկ~~ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:

6. Այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշման հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների ~~պահանջմունքների~~ գնահատման հիման վրա պրոբացիայի ծառայողը վերահսկողության պլանում սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

7. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշման հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր, ինչպես նաև այլ վայր, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:

8. Պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները, կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:

9. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշման հիման վրա պրոբացիայի շահառուի կողմից իր բնակության կամ աշխատանքի վայր մուտքը և ելքը արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ուղարկում քրեական վարույթն իրականացնող մարմնին: Այլ անձանց կողմից պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր մուտքը և ելքն արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում դատարան:

10. Դատական ակտի հիման վրա այլընտրանքային խափանման միջոցների կատարումն իրականացվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան:

11. Տարածքային մարմինն այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմում է հաշվետվություն, որն իրավասու մարմնի նշած պարբերականությամբ ներկայացվում է քրեական վարույթն իրականացնող մարմին:

12. Պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող այլընտրանքային խափանման միջոցի պայմանների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը~~Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն)~~ կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:

13. Այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին և այդ մասին հայտնում է իրավասու մարմնին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացվում է:

14. Իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվության, պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան նախարարը:

(12-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)

Հոդված 13. Տնային կալանքի և վարչական հսկողության կատարման առանձնահատկությունները

1. Տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ~~մեկ~~ աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է պրոբացիայի շահառուին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում քրեական վարույթն իրականացնող մարմնին:

2. Տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու մասին դատական ակտի պահանջները պարտադիր են պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինների, կազմակերպությունների, աշխատավայրի վարչակազմի, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերի համար, որտեղ դատարանի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել:

Գ Լ ՈՒ Խ 4.1

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 15.1. Իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը

1. Իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը ապահովում է Պրոբացիայի ծառայությունը:

2. Քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով:

~~Հոդված 16. Անվտանգության միջոցի կատարման ապահովումը~~

~~1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված անվտանգության միջոցի կատարումն ապահովում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին), իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ համապատասխան բժշկական հաստատության գործունեության վայրի կամ դատական ակտի մեջ նշված վայրի տարածքային մարմինը:~~

~~2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում դատական ակտով պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:~~

~~3. Անվտանգության միջոց նշանակելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում է պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:~~

~~4. Պրոբացիայի շահառուի կողմից առաջին անգամ անհարգելի պատճառով չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում տարածքային մարմինն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~5. Անվտանգության միջոցներ նշանակելու մասին դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:~~

~~6. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայրը՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն:~~

~~7. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:~~

~~8. Պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայր կամ այն վայրը, որտեղ անձին արգելված է այցելել, դատարանի կողմից պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, դատական ակտի պահանջների կատարման մասին պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:~~

~~9. Անվտանգության միջոց կիրառելու մասին դատական ակտի պահանջները պարտադիր են պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինների, կազմակերպությունների, աշխատավայրի, բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող մարմնի կամ կազմակերպության, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայրի վարչակազմի, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերի համար, որտեղ դատարանի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել:~~

~~10. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված մարմինները պրոբացիայի ծառայողի վկայականի ներկայացման դեպքում պարտավոր են ապահովել վերջինիս ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:~~

~~11. Անվտանգության միջոց կիրառելու մասին դատական ակտի հիման վրա պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայր մուտքը և ելքն արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է~~

~~արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:~~

~~12. Դատական ակտի հիման վրա անվտանգության միջոցների կատարումը կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ կամ առանց դրա:~~

~~13. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, խախտման մասին անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդություն ներկայացնում դատարան՝ անվտանգության միջոցը փոխելու վերաբերյալ:~~

~~14. Անվտանգության միջոցի կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք անվտանգության միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին և այդ մասին հայտնում է դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան բժշկական կազմակերպության վարչակազմ կամ այլ հաստատություն, իսկ անձնական գործն արխիվացվում է:~~

~~15. Դատական ակտով սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվության, պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ ծրագրի իրականացման վայր մուտքը և ելքը արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան նախարարը:~~

~~(16-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)~~

~~Հոդված 17. Որոշակի վայրեր այցելելու արգելքի կատարման առանձնահատկությունները~~

~~1. Դատական ակտով կիրառված որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց քրեական պատասխանատվության տարիքի հասած պրոբացիայի շահառուի կողմից հրաժարվելու կամ խուսափելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և հաղորդում ներկայացնում դատախազություն:~~

~~2. Դատական ակտով կիրառված որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները քրեական պատասխանատվության տարիքի չհասած պրոբացիայի շահառուի կողմից խախտելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

-

~~Հոդված 18.~~ ~~Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կատարման առանձնահատկությունները~~

~~1. Դատական ակտով կիրառված հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց քրեական պատասխանատվության տարիքի հասած պրոբացիայի շահառուի կողմից հրաժարվելու կամ խուսափելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և հաղորդում ներկայացնում դատախազություն:~~

~~2. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները քրեական պատասխանատվության տարիքի չհասած պրոբացիայի շահառուի կողմից խախտելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~3. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կատարման ընթացքում պրոբացիայի ծառայողը կարող է հոգեբանական օգնություն ստանալու տևողությունը կրճատելու կամ երկարաձգելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան:~~

~~4. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և հոգեբանական օգնություն ստանալու պարտականության կիրառումը դադարեցնելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~Հոդված 19. Վարքագծի նկատմամբ հատուկ հսկողության կատարման առանձնահատկությունները~~

~~1. Պրոբացիայի ծառայողը դատական ակտով սահմանված կոնկրետ սահմանափակումների պահպանման ընթացքի վերաբերյալ կազմում է հաշվետվություն, որը դատարանի նշած պարբերականությամբ ներկայացվում է դատարան:~~

~~2. Պրոբացիայի ծառայողը վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության կատարման նկատմամբ:~~

~~3. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:~~

~~4. Պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օգտագործման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի ծառայողը պատճառաբանված որոշում է կայացնում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին՝ պատշաճ ծանուցելով պրոբացիայի շահառուին: Որոշմամբ սահմանված ժամկետում պրոբացիայի շահառուի կողմից հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետազոտությունների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:~~

~~5. Վարքագծի նկատմամբ հատուկ հսկողություն նշանակելու մասին դատական ակտի կատարման ընթացքում տարածքային մարմինը կարող է վարքագծի նկատմամբ հատուկ~~

~~հսկողության տևողությունը կրճատելու կամ երկարաձգելու միջնորդություն ներկայացնել դատարան:~~

~~6. Վարքագծի նկատմամբ հատուկ հսկողության կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում տարածքային մարմինը վարքագծի նկատմամբ հատուկ հսկողության կիրառումը դադարեցնելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~7. Վարքագծի նկատմամբ հատուկ հսկողության ենթարկվելուց կամ սահմանված պահանջները կատարելուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և հաղորդում ներկայացնում դատախազություն:~~

~~Հոդված 20. Ընտանեկան հսկողության կատարման առանձնահատկությունները~~

~~1. Դատական ակտով սահմանված ընտանեկան հսկողության պահանջների կատարումը գնահատելու և վերահսկողություն իրականացնելու նպատակով պրոբացիայի ծառայողն առավելագույնն ամիսը երկու անգամ այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:~~

~~2. Պրոբացիայի ծառայողը վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության կատարման նկատմամբ:~~

~~3. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:~~

~~4. Պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օգտագործման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի ծառայողը պատճառաբանված որոշում է կայացնում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ~~

~~թունավոր նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին՝ պատշաճ ծանուցելով պրոբացիայի շահառուին: Որոշմամբ սահմանված ժամկետում պրոբացիայի շահառուի կողմից հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետազոտությունների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:~~

~~5. Պրոբացիայի ծառայողն անհրաժեշտության դեպքում ընտանեկան հսկողության սահմանման տևողությունը կրճատելու կամ երկարաձգելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~6. Պրոբացիայի ծառայողն ընտանեկան հսկողության կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~7. Պրոբացիայի շահառուի կողմից ընտանեկան հսկողության ենթարկվելուց կամ սահմանված պահանջները կատարելուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության այլ միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

Հոդված 16. Անվտանգության միջոցների կիրառման ապահովումը

1. Անվտանգության միջոցի կիրառումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է պրոբացիայի շահառուի հաշվառման, մշտական բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի կամ համապատասխան բժշկական հաստատության գտնվելու վայրի կամ բնակության վայրին մոտ Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը կամ մշտական բնակության վայր չունեցող, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի ստորաբաժանումը կամ Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացում և վերականգնողական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումը:

Հոդված 17. Որոշակի վայրեր այցելելու արգելքը կիրառելու կարգը

1. Որոշակի վայրեր այցելելու արգելքը կիրառելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով:

Հոդված 18. Պատասխանատվությունը որոշակի վայրեր այցելելու արգելքը չկատարելու համար

1. Դատարանի կողմից սահմանված՝ որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց խուսափելու համար պրոբացիայի շահառուն ենթակա է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված կարգով:

Հոդված 19. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կիրառելու կարգը

1. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կատարելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով:

2. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն ունեցող պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի վատթարացման դեպքում երկօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և այն ներկայացնում համապատասխան դատարան, ինչպես նաև տեղեկացնում պրոբացիայի շահառուի բնակության վայրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությանը: Արձանագրությանը կցվում է պրոբացիայի շահառուի հոգեկան վիճակի վատթարացումը փաստող՝ հոգեբանի կամ հոգեբույժի մասնագիտական կարծիքը:

3. Վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայողն իրավունք ունի պրոբացիայի շահառուին կանչել Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում, ստանալ գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցից պահանջել տեղեկություններ նրա վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել վերահսկողության պլանից բխող այլ գործողություններ: Հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 20. Պատասխանատվությունը հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը չկատարելու համար

1. Հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց հրաժարվելու կամ խուսափելու համար պրոբացիայի շահառուն ենթակա է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգով:

~~Հոդված 21.~~ ~~Հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորման կատարման առանձնահատկությունները~~

~~1. Դատական ակտով սահմանված հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորման կատարման ընթացքում պրոբացիայի ծառայողը հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորման տևողությունը կրճատելու կամ երկարաձգելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~2. Պրոբացիայի շահառուի նկատմամբ հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորման հետագա իրականացման անհրաժեշտության բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողը հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորման իրականացումը դադարեցնելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~Հոդված 22.~~ ~~Կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավման կատարման առանձնահատկությունները~~

~~1. Դատական ակտով սահմանված կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավման մասին դատական ակտի կատարման ընթացքում պրոբացիայի ծառայողը կարող է կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին պրոբացիայի շահառուի ներգրավվման տևողությունը կրճատելու կամ երկարաձգելու միջնորդություն ներկայացնել դատարան:~~

~~2. Կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավման անհրաժեշտության բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողը կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին պրոբացիայի շահառուի ներգրավման իրականացումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~3. Կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին մասնակցելուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության այլ միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

Գ Լ ՈՒ Խ 6

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ, ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ, ՊԱՏԻԺՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ~~, ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԵԼՈՒ,~~ ՊԱՏԻԺԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հոդված 23. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու~~, դատվածությունը հանելու~~ վերաբերյալ պրոբացիայի ծառայության կողմից զեկույցներ տրամադրելը

(վերնագիրը փոփ. 23.05.18 ՀՕ-335-Ն)

1. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ զեկույցը տրամադրում է պատժի կրման վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին)~~, դատվածությունը հանելու վերաբերյալ զեկույց տրամադրում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի տարածքային մարմինը, իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ համապատասխան դատարանի դատական տարածքում գտնվող կամ պատժի կրման վայրի տարածքային մարմինը:~~

2. Տարածքային մարմինը ~~դատվածությունը հանելու վերաբերյալ զեկույցը ներկայացնում է դատարանի պահանջի հիման վրա, իսկ~~ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցը՝ ներկայացնում է —օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դատապարտյալի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու դիմումի մասին պաշտոնական ծանուցում ստանալու դեպքում:

3. Զեկույց տրամադրելու համար տարածքային մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ~~մեկ~~ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, կապ է հաստատում և հանդիպում նրա հետ, համապատասխան

քրեակատարողական հիմնարկից պահանջում է անձի անձնական գործը կամ տեղում ծանոթանում է անձնական գործին և կազմում է պրոբացիայի շահառուի անձնական գործը:

4. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում զեկույց պահանջած դատարան:

5. Պրոբացիայի ծառայողը տվյալների շտեմարանում առկա տեղեկությունների, անձնական գործի, պրոբացիայի շահառուի, նրա ուսման կամ աշխատանքի վայրի վարչակազմի, ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների հետ հանդիպումների, հարցումների արդյունքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հիմնարկներից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև համապատասխան քրեակատարողական հիմնարկի ծառայողների և այլ անձանց տրամադրած տվյալների հիման վրա կազմում է զեկույց և ներկայացնում զեկույց պահանջած մարմին:

6. Պրոբացիայի շահառուն սեփական նախաձեռնությամբ կարող է իր վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ներկայացնել զեկույցում ներառելու նպատակով:

7. Զեկույցի մեջ նշվում են պրոբացիայի շահառուի՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը.

4) աշխատունակությունը, աշխատանքային ստաժը և զբաղմունքի տեսակը.

5) կրթությունը.

6) առողջական վիճակը.

7) սոցիալական, գույքային դրությունը.

8) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.

9) բնակության մշտական վայրի առկայությունը.

10) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները.

11) արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը.

12) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը.

13) քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում դրսևորած վարքագիծը, աշխատանքային գործունեությունն ու մասնակցությունը մշակութային, կրթական միջոցառումներին.

14) ուղղմանը և վերասոցիալականացմանը վերաբերող տվյալներ.

15) այլ հանգամանքներ:

8. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու~~, դատվածությունը հանելու~~ վերաբերյալ զեկույցի կազմման կարգը սահմանում է համապատասխան նախարարը:

(23-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն, լրաց., փոփ., խմբ. 23.05.18 ՀՕ-335-Ն)

~~**Հոդված 24.**~~ ~~**Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը**~~

~~1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողությունն իրականացնում է նրա մշտական բնակության վայրի տարածքային մարմինը, իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ դատական ակտի մեջ նշված վայրի տարածքային մարմինը:~~

~~2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում դատական ակտով պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:~~

~~3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ:~~

~~4. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմվում է արձանագրություն: Պրոբացիայի~~

~~շահառուի կողմից անհարգելի պատճառով չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:~~

~~5. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում դատարան:~~

~~6. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:~~

~~7. Տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հաղորդում է ուղարկում Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:~~

~~8. Վերահսկողության պլանի հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր կամ համապատասխան բժշկական հաստատություն՝ պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:~~

~~9. Պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օգտագործման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի ծառայողը պատճառաբանված որոշում է կայացնում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին՝ պատշաճ ծանուցելով պրոբացիայի շահառուին: Որոշմամբ սահմանված ժամկետում պրոբացիայի շահառուի կողմից հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետազոտությունների անցկացման հետ~~

~~կապված բոլոր ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:~~

~~10. Պարզաբանումներ ստանալու համար պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին ծանուցագրով պարտավորեցնում է ներկայանալ տարածքային մարմին, բայց ոչ ավելի, քան երկու շաբաթը մեկ կամ նրա վրա դրված պարտականությունների չկատարման յուրաքանչյուր փաստով:~~

~~11. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողությունը դատական ակտով կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ կամ առանց դրա:~~

~~12. Պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելիս ծառայության ժամկետի ընթացքում պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան զորամասի հրամանատարությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ պրոբացիայի շահառուն այլընտրանքային ծառայություն է անցնում:~~

~~13. Պրոբացիայի շահառուին պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս պրոբացիայի ծառայությունը զինվորական կոմիսարիատ է ուղարկում դատական ակտի և պրոբացիայի շահառուի վերահսկողության պլանի պատճենները:~~

~~14. Զորամասի հրամանատարությունը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր է պրոբացիայի ծառայության մարմնին հայտնել այդ մասին, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին:~~

~~15. Եթե ծառայության ժամկետի ավարտից հետո դատարանի նշանակած փորձաշրջանի ժամկետը չի ավարտվել, ապա պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պրոբացիայի ծառայության համապատասխան մարմինը՝ ընդհանուր հիմունքներով:~~

~~16. Պրոբացիայի այն շահառուների մասին, որոնց վրա դատարանը դրել է ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից բուժման կուրս անցնելու և այլ պարտականություններ, տարածքային մարմինը պարտավոր է եռօրյա ժամկետում ծանուցել համապատասխան բժշկական հաստատությանը:~~

~~17. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:~~

~~18. Անհրաժեշտության դեպքում պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան պրոբացիայի շահառուի վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ սահմանափակումներ կիրառելու մասին:~~

~~19. Պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները, կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:~~

~~20. Սույն հոդվածի 19-րդ մասով սահմանված վայրեր մուտքը և ելքն արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություններ և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում համապատասխանաբար քրեական վարույթն իրականացնող մարմին և դատարան:~~

~~21. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում խախտման մասին անհապաղ հայտնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ իրավասու այլ մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:~~

~~22. Փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտից հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտի մասին տեղեկանք և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած~~

~~դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ օրենքով սահմանված դեպքերում իրավասու այլ մարմիններին:~~

~~23. Պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ ծրագրի իրականացման վայր մուտքը և ելքը արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան նախարարը:~~

~~(24-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)~~

<u>Հոդված 24. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը</u>

<u>1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողությունն իրականացնում է Պրոբացիայի ծառայությունը:</u>

<u>2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի կատարումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ:</u>

<u>3. Պրոբացիայի ծառայություն ներկայանալու դեպքում անձը վերցվում է հաշվառման, ստորագրությամբ պրոբացիայի շահառուին պարզաբանվում են նրա իրավունքները և պարտականությունները, դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը, իրականացվում է ռիսկերի և կարիքների գնահատում և դրա հիման վրա կազմվում է վերահսկողության պլան, լրացվում է հաշվառման քարտ:</u>

4. Պրոբացիայի շահառուի՝ ծանուցմամբ նշված օրը Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում չներկայանալու դեպքում Պրոբացիայի ծառայողը երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն:

5. Դատապարտյալին նրա բնակության կամ աշխատանքի վայրում չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը պրոբացիայի շահառուին հայտնաբերելու դեպքում նրանից վերցնում է ստորագրված պարտավորագիր՝ եռօրյա ժամկետում Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու վերաբերյալ, ինչի մասին անհապաղ գրավոր տեղեկացվում է Պրոբացիայի ծառայությանը՝ կցելով կազմված արձանագրության պատճենը և պարտավորագիրը: Պրոբացիայի շահառուի կողմից անհարգելի պատճառով Պրոբացիայի ծառայություն չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

7. Եթե հնարավոր չէ կապ հաստատել պրոբացիայի շահառուի հետ, կամ նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 15 օրվա ընթացքում, կամ նրա կողմից դատարանի որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքի հայտնաբերումից հետո 15 օրվա ընթացքում չի բացահայտվում պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, ապա տարածքային մարմինը դատարան է ներկայացնում միջնորդություն՝ պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ:

8. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող, պատժից ազատելու կամ պատժի կատարումը հետաձգելու մասին դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:

9. Պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո Պրոբացիայի ծառայողը եռօրյա ժամկետում, դատական ակտը կայացրած դատարանին տեղեկացնում է դատական

ակտը կատարման վերցնելու մասին և տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

10. Վերահսկողության պլանի հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր կամ համապատասխան բժշկական հաստատություն՝ պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:

11. Պրոբացիայի անչափահաս շահառուին հաշվառման վերցնելուց հետո պրոբացիայի ծառայողը պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ այցելություն է կատարում նրա բնակության, ուսման վայրը, զրուցում է նրա ծնողների կամ օրինական ներկայացուցիչների, կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն: Ձեռք բերված տեղեկությունների և պրոբացիայի անչափահաս շահառուի հետ ունեցած զրույցների հիման վրա պրոբացիայի ծառայողը լրացնում է պրոբացիայի անչափահաս շահառուի վերաբերյալ անձնական թերթ:

12. Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո գնահատում է նրա ռիսկերը և կարիքները, ինչի հիման վրա ընդունում է որոշում մեկ ամսվա ընթացքում պրոբացիայի շահառուի կողմից Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու հաճախականությունը սահմանելու մասին, որը ներառվում է վերահսկողության պլանի մեջ: Ռիսկերի և կարիքների գնահատումը կարող է վերանայվել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ պրոբացիայի շահառուի կյանքում կատարված փոփոխությունների դեպքում:

13. Փորձաշրջանի ընթացքում վերահսկողության պլանի հիման վրա Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման ծառայողը պրոբացիայի շահառուի հետ անցկացնում է զրույց շահառուի վարքի, ընտանիքի հետ հարաբերությունների, զբաղվածության և գործունեության վերաբերյալ, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

14. Հաշվի առնելով փորձաշրջանի ընթացքում պրոբացիայի շահառուի վարքագիծը և ռիսկերի ու կարիքների գնահատման արդյունքները՝ Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը որոշում է ընդունում պրոբացիայի շահառուի հաճախումների թիվը վերանայելու մասին, ինչպես նաև հաճախումների ժամանակ նրա հետ առանձնազրույց ունենալու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին:

15. Պրոբացիայի շահառուի վրա դատարանի կողմից պարտականություններ դրված լինելու դեպքում պարզաբանումներ ստանալու նպատակով պրոբացիայի ծառայողը

պրոբացիայի շահառուին ծանուցում է Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին, բայց ոչ ավելի, քան երկու շաբաթը մեկ անգամ կամ նրա վրա դրված պարտականությունների չկատարման յուրաքանչյուր փաստով:

16. Պրոբացիայի այն շահառուների մասին, որոնց վրա դատարանը դրել է ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու և այլ պարտականություն, Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը պարտավոր է եռօրյա ժամկետում ծանուցել համապատասխան բժշկական հաստատությանը:

17. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել Պրոբացիայի ծառայությանը:

18. Պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները, կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:

19. Անհրաժեշտության դեպքում Պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան պրոբացիայի շահառուի վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ սահմանափակումներ կիրառելու մասին:

20. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող պարտականությունների խախտման դեպքում Պրոբացիայի ծառայությունը միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող պարտականությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:

21. Զինվորական ծառայության կամ այլընտրանքային ծառայության անցնելիս ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում պրոբացիայի շահառուի նկատմամբ

վերահսկողությունն իրականացնում է համապատասխան զորամասի հրամանատարությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ պրոբացիայի շահառուն այլընտրանքային ծառայություն է անցնում:

22. Պրոբացիայի շահառուն զինվորական կամ այլընտրանքային ծառայության անցնելու դեպքում Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը զինվորական կոմիսարիատ է ուղարկում պրոբացիայի շահառուի անձնական գործը՝ հետագա վերահսկողությունը շարունակելու նպատակով: Եթե դատապարտյալն ազատվում է զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, իսկ փորձաշրջանի ժամկետը դեռ չի ավարտվում, ապա անձնական գործը երեք օրվա ընթացքում ուղարկվում է Պրոբացիայի ծառայություն հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

23. Զորամասի հրամանատարությունը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր է պրոբացիայի ծառայությանը հայտնել այդ մասին:

24. Փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտից հետո Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին տալիս է փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտի մասին տեղեկանք և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ իրավասու այլ մարմիններին:

25. Փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտից հետո, եթե Պրոբացիայի ծառայությունը մինչև վերահսկողության ժամկետի ավարտը միջնորդություն է ներկայացրել դատարան պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող պարտականությունները չկատարելու համար, ապա պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն ավարտվում է, սակայն անձնական գործը չի արխիվացվում, իսկ պրոբացիայի շահառուին փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտի մասին տեղեկանք չի տրամադրվում մինչև տվյալ հարցի վերաբերյալ դատական ակտը ստանալը:

26. Եթե պրոբացիայի շահառուն փորձաշրջանի կամ վերահսկողության ընթացքում կատարել է նոր հանցանք, սակայն մինչև վերահսկողության ժամկետի ավարտն առկա չէ դրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ապա պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն ավարտվում է, սակայն անձնական գործը չի արխիվացվում, իսկ պրոբացիայի շահառուին փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտի

մասին տեղեկանք չի տրամադրվում, մինչև տվյալ հարցի վերաբերյալ դատական ակտը ստանալը:

~~Հոդված 27.~~ **~~Հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատված կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առանձնահատկությունները~~**

~~1. Հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտն ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ երեխայի դաստիարակության և խնամքի նկատմամբ հսկողության ապահովման նպատակով:~~

~~2. Պրոբացիայի շահառուի աշխատանքի տեղավորվելու դեպքում պրոբացիայի ծառայողը պատշաճ ծանուցում է ուղարկում նրա աշխատավայրի վարչակազմ: Պրոբացիայի ծառայողն աշխատանք ունեցող պրոբացիայի շահառուներից կարող է պահանջել տեղեկանք աշխատանքի վայրից:~~

~~3. Եթե հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող պրոբացիայի շահառուն խուսափում է երեխայի դաստիարակությունից և խնամքից, ապա պրոբացիայի ծառայողը համապատասխան խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում պրոբացիայի շահառուին գրավոր նախազգուշացնում է պատժի կրման հետաձգումը վերացնելու հնարավորության մասին: Պրոբացիայի շահառուն երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափող է համարվում, եթե, պաշտոնապես չհրաժարվելով երեխայից, նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակաբարոյական ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով կամ մեկ ամսից ավելի ժամկետով երեխային թողնում է ազգականների կամ այլ անձանց մոտ և անձամբ չի զբաղվում նրա դաստիարակությամբ կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին:~~

~~4. Եթե նախազգուշացում հայտարարվելուց հետո պրոբացիայի շահառուն շարունակում է խուսափել երեխայի դաստիարակությունից և խնամքից կամ պաշտոնապես հրաժարվել է երեխայից կամ տարածքային մարմնի պահանջով երկու անգամ անընդմեջ անհարգելի~~

~~պատճառով չի ներկայանում տարածքային մարմին, ապա տարածքային մարմինն այդ մասին կազմում է արձանագրություն և պատժի կրման հետաձգումը վերացնելու և դատական ակտով կիրառված պատիժը կատարելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~5. Միջնորդությանը կցվում են պատժի կրման հետաձգման մասին դատական ակտի պատճենը, երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափելը հիմնավորող փաստաթղթերը, աշխատանքի և բնակության վայրերից բնութագրերը կամ դրանց պատճենները:~~

~~6. Վերահսկողության ընթացքում, հաշվի առնելով պրոբացիայի շահառուի վարքագիծը, կատարած հանցանքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը և պատժի չկրած ժամկետը, պրոբացիայի ծառայողը պատժի չկրած մասից պրոբացիայի շահառուին ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~7. Երեխայի երեք տարին լրանալու կամ նրա մահվան կամ անձին ծնողական իրավունքներից զրկելու կամ հղիության ընդհատման կամ երեխային խնամքի հաստատություն հանձնելու դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և պատժի կրումից ազատելու կամ պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ որոշումը վերացնելու և պատժի չկրած մասը կրելու ուղարկելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

~~8. Եթե պրոբացիայի շահառուն խուսափում է դատական ակտով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք կամ փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար պատասխանատվության չի ենթարկվել կամ քրեական պատասխանատվությունից չի ազատվել, ապա պրոբացիայի ծառայողը դեպքի ի հայտ գալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ մասին կազմում է արձանագրություն և հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտը վերացնելու միջնորդություն է ներկայացնում դատարան:~~

<u>Հոդված 27. Հղի կանանց, մինչև վեց տարեկան երեխա ունեցող, արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված կամ հիվանդության հետևանքով</u>

կամ պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առանձնահատկությունները

1. Հղի կանանց կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կատարումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ երեխայի դաստիարակության և խնամքի նկատմամբ հսկողության ապահովման նպատակով:

2. Հիվանդության հետևանքով պատժի կատարումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի սպասարկող առողջության առաջնային պահպանման հաստատություն կամ մասնագիտացված բժշկական միջամտության դեպքում՝ համապատասխան մասնագիտացված բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող հաստատություն՝ բժշկական օգնություն և սպասարկում ապահովելու նպատակով: Բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող հաստատությունը պրոբացիայի շահառուի առողջական վիճակի փոփոխությունների մասին պարբերաբար, իսկ պատժի կատարումը հետաձգելու հիմք հանդիսացող հիվանդության բուժման կամ պրոբացիայի շահառուի առողջական վիճակի կայունացման կամ բարելավման դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում տեղեկացնում է պրոբացիայի ծառայողին:

3. Պատժի կատարումը հետաձգելու հիմք հանդիսացող հիվանդության բուժման կամ պրոբացիայի շահառուի առողջական վիճակի կայունացման կամ բարելավման մասին բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող հաստատությունից տեղեկությունը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողը կազմում է համապատասխան արձանագրություն և հինգ օրվա ընթացքում պատժի կրման հետաձգումը վերացնելու և դատական ակտով կիրառված պատիժը կատարելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:

4. Պրոբացիայի ծառայողն աշխատանք ունեցող պրոբացիայի շահառուներից կարող է պահանջել տեղեկանք աշխատանքի վայրից:

5. Եթե հղի կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող պրոբացիայի շահառուն խուսափում է երեխայի դաստիարակությունից և խնամքից, ապա պրոբացիայի ծառայողը համապատասխան խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա

ժամկետում պրոբացիայի շահառուին գրավոր նախազգուշացնում է պատժի կրման հետաձգումը վերացնելու հնարավորության մասին:

6. Եթե նախազգուշացում հայտարարվելուց հետո պրոբացիայի շահառուն շարունակում է խուսափել երեխայի խնամելուց և դաստիարակելուց կամ ընդհատում է հղիությունն առանց դրա ընդհատման համար օրենքով սահմանված բժշկական ցուցումների կամ հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն, ապա Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումն այդ մասին կազմում է արձանագրություն և պատժի կրման հետաձգումը վերացնելու և դատական ակտով կիրառված պատիժը կատարելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան: Միջնորդությանը կցվում են պատժի կրման հետաձգման մասին դատական ակտի պատճենը, երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափելը հիմնավորող փաստաթղթերը, աշխատանքի և բնակության վայրերից բնութագրերը կամ դրանց պատճենները:

7. Երեխայի մահվան դեպքում Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը վերացնելու հարցը լուծելու նպատակով: Միջնորդությանը կցվում են երեխայի մահվան փաստը հավաստող փաստաթուղթը, շահառուի աշխատանքի և բնակության վայրերից բնութագրերը կամ դրանց պատճենները:

8. Եթե պրոբացիայի շահառուն խուսափում է դատական ակտով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք կամ փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելը պրոբացիայի շահառուն կատարել է մեկ այլ հանցանք, որի համար պատասխանատվության չի ենթարկվել կամ քրեական պատասխանատվությունից չի ազատվել, ապա պրոբացիայի ծառայողը դեպքի ի հայտ գալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ մասին կազմում է արձանագրություն և հղի, մինչև վեց տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու կամ պատժի կատարումը հետաձգելու մասին դատական ակտը վերացնելու միջնորդություն է ներկայացնում դատարան:

Հոդված 28. Պրոբացիայի ծառայության գործառույթները պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման ոլորտում

1. Պրոբացիայի ծառայությունն իր մոտ հաշվառված պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման նպատակով մշակում և իրականացնում է համապատասխան աշխատանքի և սոցիալական ապահովությանը, մշակութային, կրթական, մասնագիտական վերապատրաստմանը և վերաորակավորմանը, սպորտային, առողջապահական, հոգեբանական, վարքաբանական, զբաղվածությանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր:

2. Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերասոցիալականացման միջոցառումների նպատակը սոցիալական վերականգնման կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքների և ուսումնական ծրագրերի նախաձեռնումն ու իրականացումն է, ինչպես նաև ոգելից խմիչքներ (ալկոհոլ), թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր գործածելու դեմ պայքարի ոլորտում հատուկ ծրագրերի իրականացումը:

3. Պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների ~~պահանջմունքների~~ գնահատման հիման վրա կազմվում է վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները:

4. Քրեական վարույթի մինչդատական փուլում պրոբացիայի շահառուի նկատմամբ վերասոցիալականացման միջոցառումները կարող են իրականացվել միայն նրա համաձայնության դեպքում:

5. Վերասոցիալականացման միջոցառումների մշակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 39. Պրոբացիայի շահառուի անձնական գործը

1. Պրոբացիայի շահառուի վերաբերյալ կազմվում է անձնական գործ, որը պարունակում է նրա վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, այդ թվում՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) բնակության, հաշվառման վայրը (հասցեն).

4) ընտանեկան դրությունը.

5) գույքային դրությունը.

6) դատական ակտի կամ կատարման ենթակա այլ իրավական ակտի վերաբերյալ տվյալներ.

7) նախկին դատվածությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն.

8) սոցիալական միջավայրը՝ սոցիալական և մշակութային պայմաններ, ներառյալ՝ վերաբերմունք, ինչպես նաև ֆիզիկական շրջապատ, ուր անձն ապրում է, կրթվում, աշխատում, տեղաշարժվում և կազմակերպում իր անձնական կյանքը.

9) պրոբացիայի ծառայության հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում իրավունքների և պարտականությունների շրջանակը.

10) այլընտրանքային խափանման միջոցները և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները կատարելուն վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ.

11) ռիսկերի և ~~պահանջմունքների~~ պարբերական գնահատման տվյալներ.

12) անձի վերաբերյալ կազմված բնութագրերն ու զեկույցները.

13) անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տվյալներ.

14) վերասոցիալականացման միջոցառումները.

15) օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր և տվյալներ:

2. Պրոբացիայի շահառուի անձնական գործում առկա տեղեկությունները գաղտնի են:

3. Առանց պրոբացիայի շահառուի համաձայնության պրոբացիայի շահառուի անձնական գործին գրավոր որոշմամբ կարող են ծանոթանալ.

1) քրեական վարույթն իրականացնող մարմինները, եթե տվյալ անձը քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ.

2) համապատասխան նախարարությունը՝ իր կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների շրջանակում.

3) դատախազը՝ իր իրավասության շրջանակում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս.

4) դատարանը՝ իր իրավասությունների շրջանակում:

4. Այլ անձինք պրոբացիայի շահառուի անձնական գործին կարող են ծանոթանալ բացառապես վերջինիս գրավոր համաձայնության առկայության դեպքում կամ դատական ակտի հիման վրա:

5. Պրոբացիայի շահառուի անձնական գործում առկա տեղեկություններին ծանոթանալու իրավասություն ունեցող անձինք պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և չփոխանցել դրանք երրորդ անձանց, բացառությամբ

օրենքով նախատեսված դեպքերի: Սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

(39-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն, 23.05.18 ՀՕ-335-Ն)

Հոդված 54. Համապատասխան նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)

1. Համապատասխան նախարարությունը կազմակերպում, ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ:

2. Համապատասխան նախարարը՝

1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ.

2) արձակում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ.

4) քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

5) սահմանում է պրոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

6) հաստատում է պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, պրոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքը և ելքն արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը.

7) հաստատում է իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվությունների և արձանագրությունների ձևերը.

8) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու~~, դատվածությունը հանելու~~ վերաբերյալ զեկույցը կազմելու և տրամադրելու կարգը.

9) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.

10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

(54-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն, 23.05.18 ՀՕ-335-Ն)